

Մամուլի հաղորդագրություն

Գեկտեմբերի 16-ին «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի կողմից ուղարկված գրությամբ Հայաստանի իշխանությունները տեղեկացվել են, որ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի տնօրենների խորհուրդը հաստատել է Հայաստանի Հանրապետության հետ կնքվելիք համաձայնագիրը՝ 235,65 մլն ԱՄՆ դոլար ծավալով և հինգ տարի իրականացման ժամկետով: Համաձայնագրի հիմնական նպատակն է գյուղական աղքատության կրճատումը գյուղատնտեսական արտադրանքի կայուն աճի ապահովման միջոցով: Այս նպատակի ապահովման համար նախատեսվում է առաջիկա հինգ տարիների ընթացքում ռազմավարական ներդրումներ իրականացնել գյուղական ճանապարհների և ոռոգման ենթակառուցվածքներում, ինչպես նաև ֆինանսական և տեխնիկական աջակցություն տրամադրել գյուցացիական տնտեսություններին և ագրոբիզնեսին: Համաձայնագրի շրջանակներում իրականացվելիք ներդրումների ուղղակի շահառուներ կհանդիսանան 750 հազար Հայաստանի բնակիչներ կամ գյուղական բնակչության 75 տոկոսը, և ակնկալվում է, որ միայն ծրագրի իրականացման արդյունքում գյուղական աղքատությունը կկրճատվի 6 տոկոսով:

Ծրագրի ընդհանուր բյուջեի, որը կազմում է 235.6 մլն ԱՄՆ դոլար, բաշխումը ենթաբաղադրիչների միջև հետևյալն է.

- գյուղական ճանապարհների վերականգնման ծրագիր՝ 67.1 մլն ԱՄՆ դոլար,
- ոռոգելի գյուղատնտեսության ծրագիր՝ 145.67 մլն ԱՄՆ դոլար (այդ թվում՝ գյուղատնտեսության կայունության ենթաբաղադրիչ՝ 32.42 մլն ԱՄՆ դոլար),
- մոնիտորինգ և գնահատում՝ 5.08 մլն ԱՄՆ դոլար,
- ծրագրի կառավարում և հսկողություն՝ 17.79 մլն ԱՄՆ դոլար:

Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերականգնել 943 կմ ընդհանուր երկարությամբ թվով 85 ճանապարհահատվածներ, ինչը կազմում է «կենսական նշանակության» ճանապարհային ցանցի շուրջ 45 տոկոսը:

Ոռոգելի գյուղատնտեսության ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերականգնել 21 տարածաշրջանային ոռոգման սխեմա: Մասնավորապես, այդ աշխատանքները կներառեն ոռոգման 15 համակարգերի վերափոխում մեխանիկականից ինքնահոսի, 7 ջրամբարների վերականգնում կամ կառուցում, 200 կմ մայր ջրանցքների վերականգնում, 68 պոմպակայանների արդիականացում, 15 տոկոս համաֆինանսավորման պայմանով ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգնում, ինչպես նաև Արարատյան դաշտավայրի դրենաժային համակարգի արդիականացում: Գյուղատնտեսության կայունության բաղադրիչի մասով նախատեսվում է աջակցել բարեփոխումներին՝ ուղղված ԶՕԸ-երի ինստիտուցիոնալ, վարչական և գործառնական հզորացմանը, ինչպես նաև ֆերմերներին տրամադրել խորհրդատվություն հետբերքահավաքային և ոռոգման նոր տեխնոլոգիաների, վերամշակման և մարկետինգի վերաբերյալ: Նախատեսվում է նաև վարկային ռեսուրսների տրամադրում՝ վերը նշված տեխնոլոգիաները ֆերմերային տնտեսություններում ներդնելու համար: